

ՆՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐ. ԳԻՏԵԼԻՔԻ  
ՎԻՐՏՈՒԱԼ ՏԱՃԱՐ»

Լույս է տեսել Վահան Վահանյանի և Գրիգոր Վահանյանի<sup>1</sup> հեղինակած **«Հայկական ժայռապատկերներ. գիտելիքի վիրտուալ տաճար»** նոր մենագրությունը: Այն տպագրվել է 2017 թվականի ապրիլին **LAMBERT Academic Publishing** հրատարակչության կողմից Գերմանիայում:

Նախապատմական և տոհմական ժողովուրդներն ամբողջ աշխարհում թողել են միլիոնավոր պատկերներ Աֆրիկայում, Ամերիկայում, Ասիայում, Եվրոպայում և Կովկասում: Այս ահռելի ժառանգությունը լի է ուղերձներով, որոնք հարկավոր է վերծանել և հասկանալ, և որոնք կարող են բանավեճի առարկա դառնալ: Ի՞նչի մասին են խոսում այդ պատկերները: Ի՞նչ պատմություններ են փորձել դրանք ստեղծողները պահպանել կամ փոխանցել մեզ: Մարդկանց և կենդանիների պատկերները նկարագրում են իրադարձություններ, առասպելներ և հիշողություններ: Որոշ պատկերներ հնարավոր է վերծանել, իսկ դրանց պատմությունները կարող են հարստացնել նախորդ մշակույթների մասին մեր պատկերացումները, մյուս պատկերները դեռ պետք է հասկանալ և գիտական հետաքրքրասիրություն արթնացնել: Այս և շատ այլ հարցեր քննարկվում են **«Հայկական ժայռապատկերներ. գիտելիքի վիրտուալ տաճար»** մենագրության մեջ: Ժայռապատկերների համալիրների համեմատական ուսումնասիրության, վերլուծության և սինթեզի նոր արդյունքները դիտարկվում են որպես նախապատմական գիտելիքների հարացույցի և փորձի ճանաչողական մշակույթի երևույթ: Աշխարհի նախապատմական և ցեղային ժողովուրդների՝ որոշակի գլոբալ սոցիալ-տնտեսական գործընթացները հասկանալու և վերհանելու մեջ առանցքային տեղ են զբաղեցնում հայկական ժայռապատկերները: Մենագրության նորարարական մոտեցումը ներկայացնում է **հայկական ժայռապատկերները որպես բանականության, գաղափարների և զգայարանների վիրտուալ քարե հանրագիտարան, որպես smart պահոց**: Քարե հանրագիտարանը (գիտելիքի վիրտուալ տաճարը) պարունակում է տվյալներ և մոտիվներ համաշխարհային դիցաբանության, կրոնի, հնագիտության, փիլիսոփայության, հոգեբանության, մարդաբանության, սոցիոլոգիայի, արվեստի և լեզվաբանության ուսումնասիրության շրջանակներում: Հեղինակները հայկական ժայռապատկերները դիտարկում են որպես վերծանված, ինչպես նաև դեռևս չվերհանված և թաքնված նախապատմական գիտելիքների վիրտուալ կլաստերային համակարգ:

<sup>1</sup> Վ. Վահանյանին շնորհվել է մագիստրոսի աստիճան Գրաֆիկական դիզայնի միջազգային ինստիտուտի (Ֆլորենցիա, Իտալիա) կողմից և արվեստագիտության թեկնածուի աստիճան՝ Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում: Գ. Վահանյանը Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի պրոֆեսոր է և հանդիսանում է ժայռապատկերների հետազոտության «Քարեդարան» հայկական կենտրոնի հիմնադիրը և ղեկավարը: Նրանք հեղինակել են ավելի քան 200 գիտական հոդված և 8 մենագրություն:

Կարող եք ձեռք բերել մենագրությունը՝ անցնելով հետևյալ հղումներով.

amazon

1. Amazon.ca (Canada)
2. Amazon.co.jp (Japan)
3. Amazon.co.uk (United Kingdom)
4. Amazon.com (United States)
5. Amazon.com.br (Brazil)
6. Amazon.com.mx (Mexico)
7. Amazon.de (Germany)
8. Amazon.es (Spain)
9. Amazon.fr (France)
10. Amazon.in (India)
11. Amazon.it (Italy)
12. Booklooker.de
13. Bucher.de
14. Buchkatalog.de
15. Buchweb.de
16. Deutsche National Bibliothek
17. Ebay.de
18. Google Books
19. Kaufroboter.de
20. Knigozal.com
21. Libro.at
22. MoreBooks
23. OmniScriptum GmbH & Co. KG
24. Tyrolia.at
25. Umbreit.de
26. Weltbild
27. Zvab.com



Lap-publishing.com